




ՀԱՅԿԱՅԻՆ ԵՐԱՅԻՆ

ԵՐԱՅԻՆ ԵՐԱՅԻՆ

ԵՐԱՅԻՆ ԵՐԱՅԻՆ

ԹԻԻ 47

2/15 ՅՈՒՆԻՍ 1912

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ


ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ


ՃԱՐԱԹԱԹԵՐԹ



Երկրորդ տարի † Յունիս 2/15 † Թիւ 47

ԳԵՂՕՆ

ԱՌ ԱՍՏՈՒԱԾԱՄԱՅՐ ԿՈՅՍՆ



Աստուածածին ԿՈՅՍ-ՄՕՐ նուիրուած ծաղկաձողիս և հիսաքանչ Մայիս ամսույսն ջերմնուանդութեան վերջանալուն իբր սրգիական ծաղկեփունջի մի ձօն, փափաղեւանք թարգմանաբար դնել Արձագանգի մէջ՝ տիեզերահռչակ մեծ բռնաստեղծ՝ Հնչեակի անդուգական վարպետ ԲԵՂ-ՐԱՐՔԱՅԻ իբր Զայն տալաշուանաց, առ Կոյսն աննման ձօնած մի Գեղօնը (Canzone), որոյ վսեմ իմաստները անդամանդակուռ յեռմամբ ազուցուած են հիանալիօրէն քաղցր և ճարտարաճիւս ոտանաւորներու ոսկեգրուագներուն մէջ՝ մրմնջող լեզուով, ոճոյ հնարագեղ պէսպիսութեամբ, դարձուածներով և ճոխ յանգերով: Մեր թարգմանիչն ալ, որչափ հնար է այսքան դժուարին մի գլուխ-գործոցը թարգմանել, մա-

նաւանդ հայերէնի . — ճգնած է պահել խղճման թեամբ ամէն զեղեցկութիւնները և մեծապէս յաջողած . նոյն իսկ բառերու նիւթական շարքն, սողերու չափին զանազանութեան, զաշնակութեան և ընդհանառ կանոնաւոր կրկնութեանց և յանդերու ընդերու զման մէջ, մինչև իսկ վերջնից սողին յանգը վերջին սողին կիսուն հետ նոյնայանդ ելով, եւ ըն . Սանդ զննող և արուեստէն հասկցողներ քաջ քաջ պիտի տնդադառնան ճնորհաւորելի է Գեր . թարգմանիչը :

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱԲԿ

Քեդրարֆա ծնած է Արհաձօի մէջ 1304ին: Խիս նշանաւոր իտալացի քանաստեղծ մըն ալ՝ որ հաւասար տաղանդով փայլած է թէ իտալերէն ու թէ Լատիներէն գրածոցը մէջ: Եւ տեսակներով կը հաւասարի անձանդի. իսկ ոճոյ գուն ագեղութեան ու ճոխութեան մասի կը գերազանցի իսկ զանի: Հայրը կասաղի հետեւորդ մըն էր Կիպիէան ֆառաֆական կուսակցութեան, այսինքն՝ Կայսերականներուն, որ պատճառաւ աստրուելով ընտանեօք հաստատուեցաւ յԱլիքնեօն: Քեդրարֆա դիպի 1327ին ճանցաւ Լատուս անուն նշանաւոր գիտնիկն պատմութիւնը կը յոռ այլ կնոջ մասին՝ որ այնքան մեծ դեր խաղաց Քեդրարֆայի կեանքին մէջ: Բայց, ինչպէս յուրջ ֆենտաստեր կը պնդեն իտալմբ, Լատուս իրականութիւն ունեցող կին մը չէ, այլ քանաստեղծին մէկ կեղծիքը, որ հիմ ընած է իր նշանաւոր նուագներուն՝ իր մարմնացումը երկրային գեղեցկութեան: Իր այս մտախաբիւն նուիրած տղերքի կնիք նշանաւոր հանդիսացուցին ամբողջ եւրոպոյ մէջ: 1341ին Հռոմի գնաց Քեդրարֆա եկեղեցական ասիճաններն ընդունելի վերջ, եւ հոն քանաստեղծի պատկն ընդունեցաւ: Նշանաւոր ընտանիքներ կը մրցէին իրարու հետ Քեդրարֆայի ներկայութիւնը վայելելու համար: Քաղաքական մեծ դերեր ալ խաղացած է Քեդրարֆա. իր կեանքին վերջին տիրուն Վենետիկ հաստատուեցաւ: Ս. Կոյսին ձօնուած Գեղօնը գոր հոս քարգմանարար յարաջ կը բերեմ, ճշմարիտ մարգարիտ մըն է, ու միեւնոյն ասեմ Գանձարան մը՝ որ ամփոփուած էմ ամենեկն գործիկ կերպով ինչ որ կարելի է ըսել Աստուածամոր վրայ: Միայնագոր մըն է ան միեւնոյն ասեմ, ուր Բանաստեղծը կ'ողբայ դառն արցունքով իր երբեմնի սխալները ու Ս. Կոյսին Գրութեան կ'ապաւիկի՝ անոնց ներումն ընդունելու համար:

Քեդրարֆա մեռաւ 1374ին, ու քաղուեցաւ Արֆուայի Եկեղեցոյն առջեւ



ԵՐԳ ԱՌ ՄԱՐԻԱՄ

Ջղջացողը կը դիմէ Մարիամու եւ պաղտագին կը խնդրէ որ իր օգնութեան փութայ, թէ՛ այս կենաց ու թէ մահուան ատենը:

ԹԻՂԱՒ. ԱԼ. Վ. ՍԻՐՈՒՆԵԱՆ

Պոյս գեղեցիկ, արեւազգեստ¹, չողջողուն
Առանդայեռ պսակով, ա՛հ, վեհ Արեգին²
Քանի՛ հաճոյ եղար որ քու մէջդ անհուն
Լոյսն իր ծածկեց³. կ'ուզեմ վանկեր մ'սրտագին
Թոթովել քեզ, բայց առանց քու խընամոց
Եւ կամ Անոր՝ ո՛չ, չեմ կարող ճառել ես,
Որի սիրոյ⁴ փութաց հանգչիլ ի քոյ ծոց.
Քե՛զ կը կոչեմ, այո՛, քե՛զ
Որ հաւատքի ձայնին⁵ իսկոյն կը լրսես:
Կո՛յս, թէ մարդկան բախար թշուառ երբէք քեզ
Յուզեց, ո՛ն այժմ լըսէ ձայնիս աղաչեմ,
Փութա՛, վանէ իմ ստիս⁶
Թէպէտ ես հող, ու Դուն Դշխոյ Երկնահմ:

Պո՛յս իմաստուն, Դու խոհեմ աշն կոյսերուն⁷
Մինն ես թիւէն, նա՛ իմաստուն աւելի,
Իսկ լապաւերով⁸ ճոխ ամէնէն փայլփրլուն,
Հէք մարդկութեան որ վշտաց մէջ կը հալի՝
Դու կուռ վահան ընդդէմ բախտի եւ մահուն⁹
Որ աննրկուն տառ յաղթանակ կանգնել մեզ.
Սիւք զովաշունչ, երբոր կոյր տապն¹⁰ բոցակէզ
Խալ մարդոց մէջ ջերանի,
Կոյս, այդ աչեր գեղանի
Որ տխրալից տեսան վէրքերն¹¹ սիրասուն
Որդւոյդ՝ քաղցրիկ մարմնոյն վըրայ սարսուռն,
Դարձուր ծրփուն իմ հոգւոյս
Ուշակսրոյս¹², որ կ'ըսպասէ քենէ լոյս:

Պո՛յս մաքրափայլ, ամենեւին կատարեալ,
Որդւոյդ՝ զարմիկ միակ դատրիկ¹³ Դու եւ Մայր.
Այս կենաց լոյս, հանդերձելոյն կու տաս փայլ.

Հօր Միաժինն ու քու Որդիդ յայս աշխարհ՝
 Լուսափողփող երկնից վե՛հ Դուռ¹⁴, քեզմով լսկ
 Եկաւ փրկել յետին օրերն¹⁵ մարդն անոք.
 Եւ դու միայն՝ օթեւանէն այս երկրի
 Երեւեցար ընտրելի.
 Ո՛վ օրհնեալ Կոյս,
 Որ Եւայի կոծին տեղ առա ժլափա յոյս,
 Օ՛հ, ըրէ գիս արժանի իւր չընորհաց
 Ո՛վ երջանիկըդ անվերջ,
 Երկնքի մէջ յաւիտենից պըստկուած:

Ա՛յս սրբուհի, լի թաթաղուն շնորհօք¹⁶,
 Որ ճշմարիտ խոնարհ սրտովդ՝ ծայրագոյն
 Սլացար երկինք, ուր աղօթիցս կը լըսես,
 Աղբւրն անմահ յորդ գթութեան ծընար դուն
 Ի՛արդարութեան Արեգն, դարուց անողոք
 Մոլորութեանց որ ճեղքէ թանձր քողն երկրէս,
 Երբեակ ի քեզ քաղցրիկ անուն պարփակես
 Մայր, դուստր, հարսն, շո՛ւք ազանց
 Կո՛յս փառապանծ,
 Կին Արքային¹⁷ որ կապանքներն խըզելով
 Ազատ քրո՞ծ է ւ՛րջանիկ մարդս յաւով.
 Օ՛հ, իր վէրքերն կենարար
 Սիրտս ընէ յար, Կոյս երանող¹⁸ անվրդով:

Ա՛յս եղական¹⁹, աննախընթաց յաշխարհի,
 Որ քու գեղովդ երկինքն համակ վառեցիր,
 Որու նըման չեղաւ երբէք, ոչ պիտ գայ,
 Սուրբ խորհուրդներ, գործք ողջախոհ սիրալիր
 Անսուտ էին օծեալ տաճար կենդանի
 Ըրին, բեղուն կուսութեանդ մէջ գերակայ.
 Դու ես սոսկ իմ երջանկութեան ակնաղբի՛ւրն
 Ո՛վ Մարիամ, թէ աղօթքովդ՝
 Կո՛յս քաղցրիկ, Կո՛յս պըթոտ
 Ուր մեղքն է յորդ՝ յորդի առատ ե շնորհք բիր,
 Քու սաքրուդ խոնարհ սրտիւ ես փարած
 Խնդրեմ ըլլաւ առաջնորդ,
 Եւ խորտուբորդ ուղիս հարթէ միգամած:

Պոյս գեղափայլ հաստատանին²² յաւիտեան ,
Այս աշխարհի Աստղ ծովու մըշտածուի ,
Քեզ վստահող նաւաստիին ապանով
Ուղղեցոյց , դէ՛հ , տե՛ս , կո՛նակներն անդուսպ
Որ լքեալիս առանց զեկի կ'սպառնան .
Կոչը յետին²³ արդ կ'ուղղեմ քեզ ես թոթով ,
Բայց իմ հոգիս ի քեզ յուսայ անվրդով ,
Մեղաւոր մ'եմ , չեմ ուրանար ,
Բայց քեզի , Կոյս , կ'աղօթեմ յար
Թող չի ինդայ չարեացս վրայ քու ստիւ²⁴ ,
Յիշէ՛ թէ մեր մեղքերն էին քուն պատճառ
Որ ծոցիդ մէջ կուսական
Առաւ մարդկան մարմին Աստուած մը փրկող :

Պոյս , քանի՞ն արցունք թափած եմ արդէն ,
Քանի՛ աղերս , աղօթք զո՛ւր եմ մրմնջած
Ի պատիժ ինձ , ի մեծ վընաս իմ կենաց ,
Ծընեղէս վեր Առնօ գետի քով ափանց²⁵ ,
Իղձեր տարբեր մինչ սրտիս մէջ կը յորդին ,
Վիշտ մ'է եղած կեանքս համակ վիշտ ու կոծ :
Դեղ մահաբոյր , գործեր , խօսքեր հոծ ու հոծ
Հոգիս պատած են մութով :
Կոյս սրբազան հոգեթով ,
Մի՛ յաղաղիր , գուցէ այս ամս է վերջին ,
Ուրաքէն սրադ օրերս ահա կը թռչին ,
Ցաւերու մէջ ու մեղաց
Անհետ սահած , մահը մընայ իմ առջին :

Պոյս , այս աշխարհ պատէ քողով մը սուգի
Սիրտըս համակ , կեանքս ամբողջ է կոծ լաց .
Նէ բիւր ցաւերս դիտէ անսիրտ , անհոգի .
Թէ գիտնար իսկ պիտ հանդիպէր անկասկած
Ինչ որ եղաւ , մինչ նըւաղումն իր կամքի
Մահ էր ինծի , ներս համար համբաւ վատ :
Արդ , դու Տիկին²⁷ , Դու Դիցուհի անարատ ,
— Թէ ներուի ինձ²⁸ կոչել այսպէս —
Կոյս գերիմաստ , խորհրդոց վէս²⁹ ,
Չիկայ քեզ բան մը թագուն , մինչ ուրիշին³⁰
Անկարելին , քեզ անհրճան բան մ'է սին ,
Վերջ դիր ցաւոցըս անթիւ ,
Քեզ ի պատիւ , ի փրկութիւն ինձ վերջին :

Կոյս, ի քեզ եմ դըրած եմ յոյսըս բոլոր,
Դու որ կըրնաս, կ'ուզես ըլլալ թիկունք ինձ,
Մի՛ լրքեր զիս, վըճռական իմ քայլիս.
Մի՛ զիս նայիր, այլ Ան՝ որ իմ ըւտեղծիչ.
Ո՛չ իմ արժէքս, այլ վեհ՝ պատկերըն անոր
Որ յիս³¹, չարժէ՝ խնամել ինձ սէս տալիկարն:
Մեղուան³² ու խօլ կենցաղս բրին զիս զերդ քար
Ուսկից հոսին չիթեր արխեղծ³³
Կո՛յս, արտասուաց ուղիս մ'անկեղծ
'Իեհ՝ առ'ւր յորդել խոնջած սրտիս մէջ տրկար,
Որ գէթ յետին արցունքս ժայթքի հեգեբս՝ զի
Անխառն տիղմէ երկրային,
Ինչպէս երբեմն էին՝ միշտ խօլութեանց մէջ լուղ ի լուղ:

Կոյս մարդասէր հրպարտութեան գոռ ստիս,
Համարնութեան սէրն ընէ քեզ գրթառաս³⁴,
Օ՛ն ողորմէ, զղջնա սրտիս, խոնարհ, ցած:
Մահկանացու հողը³⁵ փրցուն գայթ ի գայթ
Թէ սիրեմ ես ա՛յնքան թափով չէն ու չող,
Հա՛սկա քանի՛ քեզ, Կոյս վեհագն, անկասկած:
Թէ վիճակէս զըձուձ ու հէք՝ յեղակարծ՝
Կո՛յս, զգեհում քեզմով կեանք նոր,
Պիտի ձօնեմ ես աստանօր
Գու անունիդ, հանճար, զրրիչ, խոհ մըսաց,
Լեզու ե սիրտ, արցունք, հառաչ:
Ուղղէ՛ քայլերս փոյթ ի փոյթ
Եւ ա՛ն ի գութ նոր իզձերուս³⁶ դաշն աւաչ:

Օրը³⁷ մօտ է, ե յապաղիլ չի կրնար.
Սահի, թռչի ժամանակ,
Կո՛յս աննրման, Կո՛յս միակ.
Խղճի, մահու խիթը տանջէ սիրտըս յար:
Չիս քու Որդւոյդ ա՛ղէ յանձնէ, իսկական
Մարդ, իսկական Աստուած ու Տէր,
Որ զիս յեթեր տանի հանգիստն յաւիտեան:

ԾԱՆՈթՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Արեւագգես. — Ակնարկութիւն Յայնուքեան Դրբին [ԺԲ. 1] ուր րտուած է.
«Արկեալ զիւրեւ զարեգակն, եւ լուսին ի ներքոյ ոսից նորա:» — 2. Վեհ Արեգին. — Աս-
տուծոյ: — 3. Որ քու մեղք անհուն լոյսն իր ծածկեց. — Որ քու մեղք ծածկեց իր աստուա-
ծութեան լոյսը մարդկութեան կեդարտմանին ներքեւ, Փրկչին յապցմամբ: — 4. Ի սիրոյ. —

Մարդիկներ սիրելէն: Տանդէ եւս իր առ Մարիամ ուղղած աղօթքին մէջ (*Արքայութ. 1.*)
 խոսէ. «Արգանդիդ մէջ վառեցաւ Սէրն...» — 5. *Որ հաւատաք...* Ով որ քեզի կը դիմէ՝ քու
 օգնութեանդ վրայ վստահելով: — 6. *Իմ ոտքիս*. այն երկրաւ որ սէր որ կը հետապնդէ զիս: —
 7. *Դու խոհեմ այն կոյսերուն* .. Աւետարանի մէջ յիշատակուած եօթն իմաստուն եւ եօթն
 լիմար կոյսերու առասկա կը յիշեցուի հոս: — 8. *Իսկ շապտորդ...* Սակայն քու լապտերդ
 շատ աւելի լուսեղ է քան անոնցը: — 9. *Կռռ զահաւն*... Տանջուած մարդկութիւնը չէ թէ
 միայն բախիտ հարուածներուն այլ մահուան դէմ անգամ կը պաշտպանէ զուն: — 10. *Եր-*
բոր կոյր զայն... ցանկութեան, մարմնոյ հետեանները: — 11. *Տեսաւ վերջերս* ... Բու
 Ողբոյդ մարմնոյն վրայ բացուած վերքեր: — 12. *Ողբոյրդ*. — Ցանկութենէն կոյրցած,
 խելքը կորուսած: — 13. *Դոտիկ*... Տանդէ եւս վերեւ յիշատակուած աղօթքին մէջ քսած է.
 Ժու կոյս մայր, զուստ որդւոյդ: — 14. *Վեհ Դուն*. Քեզմէ իբր լոյս ժայթքող դուն մը
 կըլաւ քու որդիդ այս աշխարհ: — 15. *Յեշին օրերն*. Աշխարհի վերջին օրերուն: Դաւիթի
 հիսունեայ մասեցագիրք վեց օրերն կը բաժնէին աշխարհի տեղութիւնը. որոնց է՛ն վեր-
 ջինը կը ղեկին Քրիստոսի Գալստենէն մինչեւ վերջնական դատասանը: — 16. *Լի...* շնորհօք.
 Դիպէս ցաւը քուսած է Հրեշտակային ողբունաստուութեան մէջ: — 17. *Կին Արքային* ...
 Հարսն, բազումի: — 18. *Կոյս երանոյ*. Որ իրապէս երջանիկ կ'ընէ զմարդ հեմարիս աղ-
 քիւր երջանկութեան: — 19. *Կոյս եղական*. Դուն եւս միակ Կոյսը: — 20. *Տաճար*. Բու
 ծոցը կենդանի տաճար մը եղաւ հեմարիս Աստուծոյ. — 21. *Որ մեղքն առաւ*... Ս. Պօղոսի
 խօսքերուն կ'աւանդէ: — 22. *Հաստատուիմք*: Ինչպէս կ'երգենք Լիբանիայի մէջ. *Աշտարակ*
Դաւթեան. Աշտարակ փոքրեալ: — 23. *Կոյր յեշին*. Դաւաբեկեալի մը արձակած յեշին օգնութեան
 աղօթակը. ձեռաբանութիւն մըն է աս, որով ցոյց կու տայ կորսեան վրայ եղող հոգւոյ մը
 սինկը: — 24. *Բու ոտքիս*. Օձը. սասանան: — 25. *Առեօ գեղ*... Բուն իր ծննդավայրը Արեւմտ
 Բաղաւնի եր'որու մօտէն կ'անցնի Առեօ. բայց հոս հաւանաբար Թօմաւայի գաւառը կ'ըմբռնէ
 զոր Առեօ գետը կ'որոգէ: — 26. *Այս աշխարհ*... Հոս աշխարհը բռնով կ'ըմբռնէ Լաուռան՝ որու
 աշխարհային գեղին կամ լաւ եւս անկասարելութեան հետ կը բաղդատէ Ս. Կոյսին անբաղ-
 դատելի յասկութիւնները. Լաուռա՝ երկրային ու տիար կին մըն է, Կոյսը՝ փառայեղ
 դէտոյ երկինք: Լաուռա չի ըմբռնէր Բանաստեղծին միտքերը. Կոյսը ամենց ամենուն ալ
 գիտակ է: Լաուռա՝ եթէ հանջնար անգամ զայնս՝ դարձեալ անկարող էր դարձան մ'ընե-
 լու, եթէ ոչ ինքզինքին անպատուութեամբք եւ Քերթողին կեանքի վստածովք. բայց Կոյսը
 կարող է բուժել զայնս ի մեծ փառս իր անուան՝ եւ ի փրկութիւն Քերթողին: — 27. *Տի-*
կին. Տիրուհի, բազումի: — 28. *Թե ցերեկ ինձ*. Դիցունի բառը կռապաշտական բա-
 ցաստութիւն մ'ըլլալով. կերպով մը կ'ուղղէ իր քսածը: — 29. *Խորհրդոյդ վիս*. որու անունը
 բարձր ու վստել զաղափարներ կ'արթնցնէ: — 30. *Ուրիշին*. այս է՝ Լաուռայի: — 31. *Որ յիս*...
 Ոչ թէ իմ աղայանքիս, կամ արժանիքիս նայէ՝ որ ոչինչ է, այլ իմ վրաս դրոճուած աստ-
 ուածային պատկերին սիրտն համար օգնութեան հասիր ինձի: — 32. *Մեղաւն*. Մեղուա
 քս առաւելին օձախուռ մագերով ու անուշի դէմքով կին մըն էր, եւ որու վրայ կեղ-
 անացած էր ամէն կիւր, այնպէս որ անոր տեսքը մարդու հոգին ու մարդը գլխովին կը
 քաղցնէր: — 33. *Շիրքի սխեղծ*. քաւուր, խօլ արցունքներ: — 34. *Համարկութեան*. — Ինչպէս
 Դուն, եւս եւ բոլոր մարդիկ միեւնոյն մարդկային բնութիւնն ունինք: — 35. *Հոգը փցուն*.
 Ոչինչ հոգը, ինչպէս էր Լաուռա: — 36. *Նոր իրաւունք*... իմ այն իրաւունք՝ որոնք երկրային
 բաներէ դարձած են երկնայինին: — 37. — *Օրը*. — Իմ վերջին օրս, մահուանս ժամը: —



ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ՊԻՈՍ Ժ.Ի

ՄԷԿ ՊԱՇՏՈՆԱԳԻՐԸ

Ի ստորեւ նշանակեամբ կը գնենք Ս. Քահանայապետին մէկ պաշտօնագիրը զոր Ամենապ. Հոգեւոր Տէր անցեալ Կիրակի, 9 Յունիս (Ն. Տ.) թուականաւ, ի պաշտօնէ հաղորդած է որոնց որ անկ է: Այս պաշտօնագրով Կաթողիկէ Եկեղեցւոյ Գերագոյն Գլուխը և Քրիստոսի Տեսուն մերոյ երկրիս վրայ Փոխանորդը իր վճիւր տուած կ'ըլլայ մեր հասարակութեան ներկայ կայութեան վրայ: Ամէն կրօնաւէր Կաթողիկէի բարի տրամադրութենէն կը յուսացուի կատարեալ հպատակութիւն Գերագոյն Հովուի ձայնին, որով միանգամ ընդ միշտ պիտի հաստատուի ցանկալի խաղաղութիւնը:

ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ

Բերա Կ. Պոլսոյ 9 Յունիս (Ն. Տ.) 1912

... Տէր

Ասեկն ներկակեալ կը հաղորդենք Ձեզ ի պաշտօնէ՝ Սրբազան Քահանայապետին Մերոյ Պիոսի Ժ.Ի մէկ պաշտօնագիրը

Աղօթարար

(Ստորագր.) ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ—ՊԱՏՐԻԱՐԺ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ

ՊԱՏՈՒԱԿԱՆ ԵՂԲՐ

ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ. ՊԱՏՐԻԱՐԺԻ ՀԱՅՈՑ

ՊԻՈՍ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ Ժ.

Պատուական եղբայր

Ռոջոյն և Առաքելական Օրհնութիւն,

Մեր պաշտաման գերագոյն իշխանութիւնը, յիշաւի գմբակ գործոյ մը առթիւ, Հայոց Եկեղեցին իրեն վրայ կը հրաւիրէ: Քանզի մեծ

ցաւով լսեցինք և տեղեկացանք, որ հայ ազգէն ոմանք՝ Կաթողիկէ դաւանութիւնը բնաւ չյիշելով, հասած են աշխարհի յանդգնութեան և յամառութեան ընդդէմ այս Առաքելական Աթոռոյ և քու հոգեւոր իշխանութեանդ, որ ժպրհեցան զքեզ՝ իրենց հովիւը, անորոգանօք և թշնամանօք ծածկել, որովհետեւ պաշտամանդ Կործադրութենէն խափանել, քու պաշտօնական բնակարանէդ վտարել: Չկրցաւ այս նախաժառանգ անիրաւութենէն զիրենք արգելով՝ բարեպաշտութիւնը, չկրցաւ յետոյ նահանջեցնել՝ պարտականութեան գիտակցութիւնը, չկրցան խափանել զիրենք՝ ո՛չ օրինաւոր իշխանութեան յորդորները, ո՛չ ծանր ազդարարութիւնները, և ոչ սպառնալիք պատժոյ: Նա մանաւանդ հաճոյ թուեցաւ իրենց զիմեջ նոյն իսկ յամառութիւն ի Հռովմէական Եկեղեցւոյ, կազմելով Վարչական բաւառ ժողով մը՝ առանց ամենեւին միջամտութեան եկեղեցական իշխանութեան, և ակն յանդիման ցոյց տալով իրենց կամքը՝ Պատրիարքական Աթոռոյ եկամուտները գրաւելու:

Արդարեւ որչափ սերտագոյնս կը սիրենք Հայերը, այնչափ աւելի դաւանապէս կը ցաւինք այս անարժան գործերուն, այս անզգամ խորհուրդներուն վրայ: Եւ թէպէտ տհաճելի է Մեզ խառութիւն գործածել այնպիսեաց դէմ, զորս հայրական սէրն կը պարտադրէ Մեզ իրրեւ որդիս նկատել, սակայն յակամայ կամս կը ստիպուինք առ այս, քանի որ Մեր պարտքն է հսկել մեծապէս՝ որպէս զի Եպիսկոպոսաց իշխանութիւնը ամենուրեք յարդուի, որպէս զի Եկեղեցւոյ իրաւունքները անբռնաբարելի մնան, որպէս զի անոր միութիւնը բնաւ երբէք չմասնուի: Վասն որոյ այն ամեն բաները որ այս խռովեալ ժամանակի մէջ Առաքելական Աթոռոյ հրամաններուն, սրբազան կանոնաց վճիռներուն դէմ յանդգնարար ձեռնարկուած և գործուած են Կաթողիկէ Հայոցդ մէջ, խստիւ դատապարտելով, ինչ որ անոնք Եկեղեցւոյ իրաւանց դէմ որոշած են, ոչինչ և չեղեալ կը վճռենք. Վարչական ժողովը՝ զոր վերեւ յիշեցինք, բոլորովին տպօրինաւոր և հերձուածողական կը հրատարակենք. նոյնպէս հանդիսաւորապէս կը յայտարարենք որ անոր անդամները և Եկեղեցական իշխանութեան դէմ ամէն ապստամբները բանադրանաց պատժոյն ներքեւ ինկած են: — Իսկ գալով միւս Կաթողիկէ Հայոց, անոնց կ'ազաչենք և կը պաղատինք ի Տէր, որպէս զի «Մի՛ անաւակ մոլորութեամբն զգածեալք, անկանիցին յաստեաց հատաւաստութեանն» (Բ. Պետր. Գ. 17). և իրենց աղօթքը մերկններուն միացնելով, աշխատին խնդրել Աստուծմէ իրենց մոլորեալ եզրարց փրկարար ապաշխարութիւն և շուտափոյթ դարձ յառողջ միտս: — Հուսկ ուրեմն զքեզ, պատուական Եղբայր, որուն վիճակին վրայ այնչափ կը ցաւինք որ, զքեզ ճշոյզ հոգերը, նոյն իսկ զՄեզ ամէն կողմանէ տանջող հոգերը կ'աւելցնեն, արիարար համբերելու, սիրով ներկելու, Աստուծոյ պաղատելու, թող խրախուսեն՝ Առաքելայն խօսքերն ու օրինակները, որ կը գրէ. «Բամբասէին զմեզ՝ օրհնէաք,

հալածէին՝ յանձն առնուաք, հայհոյէին՝ աղաչեաք» (Ա. Կոր. Դ. 12) :
Խրախուսէ թո՛ղ զքեզ յոյսն վարձուց, որ պահեալ է անոնց որոնք ընդ
Քրիստոսի «ցանկ կային ՚ի վարձութիւնս նորա» :

Եւ իբր գրաւական երկնային շնորհաց և Մեր բարեացակամութեան,
քեզ՝ պատուական եղբայր, և քու համայն կղերիւք և ժողովրդեանդ ի
բոլոր սրտէ կը շնորհեմք ի Տէր Մեր Առաքելական Պահութիւնը :

Տուեալ ի Հռովմ առ Սրբոյն Պատրոսի ի 1 Յունիս 1912, Մեր Բա-
հանայապետութեան իննեւորդ տարին :

ՊԻՈՍ ԲԱՀԱՆԱԾԱՊԵՏ Փ.

Ս. ՊՕՂՈՍ ԵՒ ՔՐԻՍՏՈՍ

F. Prat

«Մարդ կ'ապշի, կ'ըսէ Պէյսիւլակ, Քրիստոսի կեանքին ու կենցա-
ղին վրայով առաջին առաքելայնեբուն աւելի պարզ վարդապետութենէն
յետոյ, լսելով զՊօղոս որ երկնային նախագահութիւն մը կը վերադրէ
Փրկչին՝ իր երկրաւոր ծնունդէն առաջ, և նոյնիսկ մասնակից կ'ընէ զանի
աշխարհի ստեղծագործութեան» : Վարդապետական պատմիչներու ապ-
հանքը կրնայ մասամբ յառաջ գնալ առաջին առաքելոց տառաւորածութեան
մասին անկատար ծանօթութիւն ունեցած լլլալնէն և կամ սխալ
գնահատութենէ մը, բայց իբր ինքնին դարձեալ նուազ չփոխութիւն չի
պատճառեր ամէն անոր՝ որ մարդկային ծառային կ'ըզէ վերածել Քրիս-
տոսի վեհութիւնը : Մանաւանդ երբ նկատի առնուին սա երկու կէտերը .
1) առաջին անգամ Ս. Պօղոս հաստատած է դրաւորապէս քրիստոնէա-
կան հաւատալիքները և թէ՛ Քրիստոսի մասին անոր ըրած վարդապե-
տութիւնը բնաւ վէճի առարկայ չէ եղած իր հրոմբին հակառակորդներուն
կողմէն : 2) իբր անժխտելի է և ուղղամտօրէն ճանչցուած ալ է աւան-
դական դրութիւնները պաշտպանելու նուազ հակամէտ եղող քննադատ-
ներու կողմէն անգամ : Ահա այս է որ այնքան չահեկան կ'ընէ Ս. Պօղոսի
Քրիստոսախօսութիւնը :

Այն եղանակը որով նորադարձ փարիսեցիներ կը խօսի նազովիցի
Յիսուսին վրայով, այն քիչ առաջ խաչի մը վրայ մեռնող կրօնական բա-
րեկարգիչը, որուն դորձքը ոչնչացնելն ու անունը քանդելը դեռ երէկ
իրեն փառք ու պարտք մը կը սեպէր, արաւկարդ երեւոյթ մըն է որ
կարծես կը հակառէ հոգեւորական ամէն օրինաց և պատմական ամէն
սկզբանց : Պօղոս, այն խորխոր հանճարը, ա'յնքան գիտակից իր արժա-

նապատուութեան, աշխարհ արհամարհոտ մարմնոյ և արեան կուռքերուն, հիացած ու պաշտելու գիրք մ'ունի այժմ իր Վարդապետին առջև: Կ'ուզէ անոր անպայմանօրէն անձնուէրը, սարուկն ըլլալ, ու միեւնոյն տանն սարուկը նաեւ իր եղբայրներուն՝ անոր սիրոյն համար: Չի հանդուրժեր որ ան ուրիշ ո'ւ է արարածի մը հետ համեմատութեան դրուի: Երկինքէն աւելի բարձր, արեգիւրքէն աւելի ընդարձակ, մահուէնէ աւելի հզօր, միակ յողթուող մեղաց, միակ միջնորդը շնորհաց, միակ Փրկիչը մարդկային սեռին, Քրիստոս կր'սեմացնէ իր փառքով ամէն ինչ, կը լեցնէ ամէն բան իր լիութեամբ: ան ի յաւիտենից կայ: Ուստի ամէն ծուռիկ պէտք է կրկնուի անոր առջև, երկինքը, երկրի վրայ ու դժոխոց մէջ, զի երկնային ամէնէն կատարեալ հոգիներն անգամ կը ճանչնան զանկ իրր իրենց պիտը, իրենց արարիչն ու Աստուածը: Ահա թէ ի՞նչ պիտի կերպով Առաքեալը կ'ուրուագծէ Յիսուսի անձը, չարչարանքի վաղորդանքը, անոր կեանքին ու մահուան վկաներուն, անոր հալածիչներուն և զանհնարուն խել առջև:

Ի՞նչ վիթխարի համեմատութիւններ տաւ է Խաչելոյն պատկերը Սաւղոսի մաքին մէջ: Այդ պատկերին գերազանց վեհութիւնը աշխարհի է՝ որ ա՛լ չի կրնար ածիլ. անհունին վրայ բարդում անկարելի է: Անոր օտարճանաբար դժբաղդումին հետեւելու համար մեր ըրած լոյսը ջանքերը ի գերեւ կ'ելնեն: Իր դարձին առաջին վայրկեանէն խել, իրեն համար անաղագասելի, մէկ հափիկ է Քրիստոս, չկայ բան մը անկէ վեր կամ անոր հաւասար: Եւ առ ալ չէ թէ ի չնայ մարդկային բնութեան, զի երեւոյածին անձնութեան մը չէ Յիսուս Քրիստոս, այլ իրական էակ մըն է ան՝ միշտ կենդանի իր աշակերտաց յիշատակութեան մէջ, որոնք կը յեղյեղեն անոր խօսքերն ու կը նմանին անոր դործերուն: Վարդապետին չարչարուելէն առ առաւելն չորս կամ հինգ տարի վերջն էր որ Սաւղոս քրիստոնեայ եղաւ, երբ իր հրապարակային քարոզութեան սկսաւ, տոմարակ մը տարիներ միայն սահած էին այն ատենէն ի վեր: Երբ իր առաջին թուղթերը գրեց, քսան երկու տարիներ հագիւ կը բաժնէին զինք այդ յիշատակելի թուականէն: Յիսուս Քրիստոս, որ իրմէ թերեւս ութ կամ սասը տարի մեծ էր, բառին բովանդակ նշանակութեամբ մամռնակակից մը կը սեպուէր իրեն, և որու սաէպ անգամներ հանդիպած էր ինք թերեւս երեսուցէմի դարձգարձիկ փողոցներուն մէջ կամ Տաճարին կամարակապ սրահին ներքեւ: Միեւնոյն ատեն հայրենակից մըն ալ էր ան, եթէ ճիշդ է, ինչպէս կը պնդէ Ս. Յերոնիմոս, թէ Սաւղոսի ընտանիքը Դալիլիայէ սերած էր: Ի՞նչպէս ուրեմն ան իր Աստուածը եղած էր, քանի որ ոչ Պաղեստինու միջավայրը, ոչ ալ Յիսուսի մահուան պարագաները չէին նպաստեր այսպիսի օտարածացումի մը, և հրեայ միաստուածութեան լրջութիւնը բնա՛ւ: չէր քաջալիւրս այն ծիծաղելի աստուածացումները որ կ'աւագիտս մը կամ Տիբերիոս մը անմահնեւ:

րու կարգը կը դասէին, մեհեաններ, քուրմեր ու զոհեր կը յատկացնէին անոնց, զանոնք հաւտսարեցնելով Ուրմպոսի աստուածներուն՝ որոնք իրապէս ոչ լուսագոյն էին ոչ ալ յոռեգոյն:

Երբ շողմը այլասերած Հռովմայեցիներուն որոնք արեւելեան մարդահաճութեան նախանձորդներն էին, աստուածային պատիւներ սահմանեց կայսրերուն՝ որոնք, նախ սեսակ մը զգուշութեամբ, յետոյ առանց ո՛ր և է ամօթոյ ընդունեցին զայնս, հրեայք բացարձակապէս մերժեցին նման ամպոտիշտ պաշտօն մը: Մարդու երկրպագելը, նոյն իսկ եթէ կայսր կամ թագաւոր մ'ըլլար ան, իրենց համար ամենամեծ պղծութիւն մըն էր: Եւ այն ատեն պարտաւորեցան տեղի տալ անոնց անդիմադրելի զգուանքին և պաշտօնապէս ազատ իողուլ զանոնք այնպիսի գործողութենէ մը՝ որ մահու ընէ աւելի սոսկալի էր յաջն անոնց: Քրիստոնէից ընդդիմութիւնն ալ նուազ չեղաւ, այնպէս որ յաճախ անոնք իրենց սրեամբ կնքեցին՝ Աստուծոյ վերապահեալ տիազոսներն ու պատիւները մարդու մը վերադրել չուզելու մերժումին: Հեթանոսք զուտ տեղ ճընչել կը ջանային անոնց այս խղճահարութիւնը, զի բնաւ չկրցան զայն յաղթել: Հրեաներէն աւելի Քրիստոնէից համար Կեսարի պաշտօն ընծայելը՝ Գազանին երկրպագել և Աւգոստոսներու ընծայուած տաճարը՝ Սատանայի գահը կը նշանակէր: Երբ Սուրբ Պօղոս կը պնդէ լսելով իէ մեզ համար՝ մէկ Աստուած միայն կայ, Հայրը, և մէկ Տէր, Յիսուս Քրիստոս», այս հաւատոյ դաւանութիւնը արձագանգ սուաւ իբր զայրոյթի բողոք մը քրիստոնէական խղճի՝ մահամերձ բաղմաստուածութեան դերադանցորէն մտազար բարբանջանքներուն դէմ: Ինչու որ այս ժամանակէն սկսեալ, աստուածային բոլոր դիտողութիւններն ալ, «Աստուած, որդի Աստուծոյ, Աստուած Աստուծոյ, Տէր կամ Տէր Աստուած, Փրկիչ կամ Աստուած Փրկիչ», պղծուած էին ազգերու մարդանոթութենէն և կռապաշտութեան անդիտակցութենէն: Բայց Պօղոս անվիճար կը պահէ աստուածաշնչական բոլոր արժէքը այդ աստուածներուն՝ զայնս պատշաճեցնելով նախապէս Քրիստոսի:

(Շար.)

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ռ Ո Վ Ս

Ուխտագնացութիւնները կը շարունակեն դէպ ի Հռովմ, Երկու հարիւրէ աւելի Սպանիացիք որ կը վերադառնային Սուրբ Երկիրէն, առաջնորդութեամբ Արհի. Կարրոթաթէկի Եպսկին Հռովմ եկան յոտս Սրբազան Բահանայապետին: Այս խումբին մէջ կային բազմաթիւ հնազարմ ազնուականներ Սպանիոյ:

Նոյնպէս չորս հարիւրէ աւելի ուխտաւորներէ կազմուած զաղղիական խումբ մը ներկայացաւ ի Վատիկան, Սրբազան Հօր Առաքելական Օրհնութիւնը թախանձելու իրենց և հայրենակից սիրելեաց վրայ:

Դարձեալ երկու հարիւր հազիւ բաղկացեալ Զուիցերիական ուխտագնացութիւն մը այցելեց Յերուշի պատկառելի Հայրապետը որ կը փառաւորէ Պետրոսի Աթոռը. անոր ուստից առջեւ դրաւ Հելուէտական ժողովրդաց խոնարհ հպատակութեան զգացումներուն հետ, նաեւ մեծաքանակ դրամական նուէր մը:

* * Աթէնքի նորընտիր Արհի. Բըթի արդէն գացած է իր թեմը և ստացած իր Աթոռը: Ժողովուրդը մեծ ուրախութեան ցոյցերով ընդունեց իր զինքը, և թէպէտ ինքը յոյն չէ ազգաւ, ինչպէս հանգուցեալ իր նախորդները, այլ գաղղիացի, սակայն ամէնքն ալ ըսեցին եւ թէ «Ընդունելի և սիրելի է մեզ ով որ զրկուած է մեզի հովիւ՝ Բրիտանի Փոխանորդ Սրբազան Քահանայապետէն»:

* * Փոխանակ Գեր. Պոնցանյոյի որ Ամերիկայի Միացեալ Նահանգաց տաւաքելական նախնակ անուանուեցաւ, բրորականապի դպրոցին Մեծաւոր կարգուեր է Գեր. Յուլիոս Մանթարա, որ արդէն նոյնին մէջ Փոխ-Մեծաւոր էր:

Գեր. Մանթարա երկար տարիներ Ձիմաստանու տաւաքելութեան մէջ պաշտօնավարած է:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԷԱՐԱՆ


Սրբազան Քահանայապետի կողմանէ պաշտօնադիր մը զրկուած է տա Ամենապ. Հոգեւոր Տէր, Պոզոս Պետրոս ԺԳ. Թէրզիտն: Այս գրով Ս. Պապը ոչինչ և չեղեալ կը վճռէ եկեղեցւոյ իրաւանց դէմ եղած որոշումները, նոր կազմուած վարչական ժողովը ապօրինաւոր եւ հեթոճաւանդական կը հրատարակէ, և հանդիսապէս կը յայտարարէ որ այն ժողովայն անդամները և եկեղեցական իշխանութեան դէմ ամէն ըմբոստները բանադրանաց պատժայն ներքեւ լինած են: Այս պաշտօնադիրը, առտ և ի գաւառս, հաղորդուեցաւ որոց որ անկ է:

* * Կիրակի օրը, յետ միջօրէի ժամը 4ին, մեծ հանդիսութեամբ կատարուեցաւ Ս. Աստուածածին Աթոռանիստ եկեղեցւոյն մէջ, Մայիս ամսուան վերջաւորութիւնը: Հանգէսին նախագահեց Արհի. Աւետիս Արք. Արքիմարեան, Եպս. Մարտիոս Շատ գեղեցիկ և իմաստալից քարոյ մը խօսեցաւ Գեր. Յովհաննէս Ծ. Վ. Կէտիկեան, ի վեր հանելով Աստուածամօր Կուսին փառաւորութիւնները, Անոր ջերմեռանդութեան հարկաւորութիւնը, Վարդաւան աղօթքին յոյժ մեծ օգտակարութիւնը: Թափոր կատարուեցաւ, շրջաբերելով Ս. Կուսին պատկերը, զոր եկեղեցւոյս նուիրած է երջանկալիշատակ Պիոս Թ. և Ապա Ս. Օրհնութեամբ տաւարտեցաւ հանդէսը: Եկեղեցին լեցուցած էր հոծ և բարեպաշտ բազմութիւն հաւատացելոց. որոնք մխիթարուած ի Տէր, մեկնեցան:

* * Կարնոյ մեր թղթակցին գրութենէն կը քաղենք հետեւեալը: Նոյն քաղքին նորընտիր Եպիսկոպոս՝ Արհի. Յովսէփ Մելքիսեդեկեան, Տրապիզոնի ճամբով ողջամբ ժամանեց ի Կարնո: Քաղքէն երկու ժամ հեռաւորութեամբ, մինչեւ Ըլըճա գիւղ, դիմաւորելու գնաց հաւատացելոց բազմութիւն մը, 15 կառքերով: Կղերն և առհասարակ ժողովուրդը մեծ ուրախութեամբ ընդունեցան իրենց նոր Հովիւը. ահագին բազմութիւն մը, ամէն ուղիք, խռնուած էր քաղքին մէջ, թափորին անցնելիք պողոտաներուն վրայ, տուններուն պատուհաններն ու տանիքները խճողուած էին, ժամատարմանըս զինեալ ջոկատ մը հազիւ կարող կ'ըլլար ճամբայ բանալ: Արհի. Եպս. իր պաշտօնական զգեստները հագած, Հրաւափառի երգեցողութեամբ մտաւ եկեղեցի. և շնորհակալութեան աղօթքէն վերջը, յառաջացաւ դէպ ի իւր Աթոռը ուսկից հակիրճ բայց ազդեցիկ բանաստեղծութիւն մ'ըրաւ և Սրբազան Քահանայապետին կողմանէ Առաքելական Օրհնութիւն տուաւ ժողովրդեան: Սակայն քանի մը ըմբոստ երիտասարդներ, Պոլսոյ գէպքերէն խրախուսուելով անշուշտ, ընդդիմութիւն


մ'ընելու համար, սպորդեր մտեր են նպիտակասարմանի մէջ և անոր դռները ետեւէն կը դառնան Որու հետեւանօք, անհաճոյ գէպքերու տեղի չտալու համար, նպսւր իւր ընտանեկան տունը իջեկանեցաւ, և իր հայրական յորդորներուն անսպով խաղաղութեամբ քառուեցաւ ժողովուրդը, որ դաս մը տալ կ'ուզէր այս ինքնագլուխ ըմբոստներուն:

Յուսանք թէ Սրբաղան Բահանայագետին խրատուց անսպով և հոգեւորական պատժոց երկիւղիւ գաւառներու մէջ ալ ի զգաստութիւն գտն այս ապստամբ ոգիները, ինչպէս կը պահանջէ ճշմարիտ կաթողիկէի զգացումը:



ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

Ազգային Սահմանադրութեան 52րդ տարեդարձը մեծ հանդիսութեամբ կատարուեցաւ Ազգ. Հիւանդանոցի հանգիստահան պարտէզին մէջ: Նախկին Պատրիարք Գուրգան Ս. Պատարագեց և ճառ մը խօսեցաւ:



ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐ

45 Տարեկաններու զինուորագրութեան շուրջ. — 25—45 տարեկանները զենքի տակ կոչող յօդուածը ջնջել տալու համար, երէկ Սոմ. Խորհրդարանի ոչ—խալամ բոլոր մէկուսները հաւաքաբար գիմում ըրին վարչապետին մօտ Բ. Իրան մէջ, և խնդրեցին որ կառավարութիւնը եւս առնէ այդ օրինագիծը, քանի որ հազարաւոր ընտանիքներու փճացման պատճառ պիտի ըլլայ, և արդէն շատ փայլուն վիճակ մը չուենցող մեր առեւտրական հրապարակը բոլորովին պիտի փլատակ և տնտեսական շատ աւելի ողետալի տագնապներ յառաջ պիտի գտնուին:

*. Նախարարաց ժողով. — Կիրակի օրուան Նախարարաց Խորհուրդին մէջ Սայիտ փաշա և Ներքին գործերու նախարարը ժողովին տեղեկութիւններ տուին մինչեւ քառասունըհինգ տարեկանները զենքի տակ կոչող զինուորական օրինագծի յօդուածին ջնջման համար ոչ—խալամ երեսփոխաններու և հոգեւոր պետերու կողմէ տեղի ունեցած գիմումներու մասին: Ժողովը յետ Խորհրդակցութեան նկատի առնելով որ այդ խնդիրը Պատերազմական նախարարութեան իրաւասութեան կը վերաբերի, որոշեց յանձնել անոր նկատառման:

*. Կը լսուի թէ Պատերազմական նախարարութեան մէջ Սպայտիոյի անգամներէն կողմուած ուրոյն յանձնաժողով մը նկատի պիտի առնէ այս խնդիրը և ըստ այնմ իր որոշումը պիտի տայ և պատերազմական նախարարին միջոցաւ պիտի հաղորդէ Նախարարաց Խորհուրդին:

*. Նախարարաց ժողովը նոյնպէս նկատի առաւ Ակպանիոյէ հասած հեռագիրները տեղական ըմբոստութեան մասին և տեղեկացաւ թէ տակաւին վերջնապէս կարելի չէ եղած ըմբոստական շարժումը զսպել: Հետեւաբար նոր և կարեւոր հրահանգներ տուաւ տեղական զինուորական իշխանութեանց:

*. Ալպանիոյ ըմբոստական շարժումը. — Եւքրօփայէն կը հեռագրուի թէ վերջին ընդհարման միջոցին 4 զինուոր մեռան և 7 զինուոր վիրաւորուեցան: Ապստամբներուն կուրուստը շատ մեծ է: Միթրովիդայէն և կող զինուորները 5—6 մեռեալ և վիրաւոր ունեցան: Հոստան իզգէթ պէյ Իրէք—Միլիթօփէցա ճամբան կը պահպանէ:

*. Իրէքի և Եւքրօփայի երեւելիներէն ոմանք Գարսաւոյ փախան:

*. Սայիտ 24ի գիշերը ապստամբները յարձակեցան Մալիսիոյ կամուրջին վրայ և զինուորներու հետ մէկ ժամ ընդհարելէ ետք փախան:

*. Բրիգէնտի նախորդ մէկուս Եահեսա պէյ, ժամատարմայի հանգստեան կոչուած

հարկերու պետ Ստարգ. էֆ. և իմամ Հազգը էֆ. նազովա երթալով ապստամբներուն միացան:

* * Միթրօփիցայէն ութը վաշտ զօրք իրէք զրկուած է: Ապստամբները այս զօրքին հետ ընդհարելով ուղեցին անոր ճամբան կտրել: Հրամանատարը թնդանօթ գործածելով՝ ապստամբները փախուստի մատնեց և երկու ժամուան մէջ իրէքի ճամբան ապահովեց: Այս ընդհարումին մէջ ալպանացիները երեսուն մեռեալ և բազմաթիւ վիրաւոր ունին, իսկ զինուորները՝ երեք մեռեալ և սասնրկեց վիրաւոր:

* * Մամուլի Օրէնքը. — Թա Նէա կիմանայ թէ Մամուլ օրէնքը վերաբնեղ յանձնաժողովը սրտած է ջնջել օրաթերթի մը հրատարակութեան համար դրուած 500 ոսկիի պայմանը, իսկ ասոր դէմ նոր յօդուած մը աւելցուցած է՝ մամուլի դէմ բացուած դատեալուն ձեւակերպութեանց մասին: Այդ նոր յօդուածին տրամադրութեամբ մամուլին դէմ բացուած դատերը մէկ ամսուան մէջ պիտի վճռուին:

* * Փոխառութիւնը եւ Ռէժիմ. — Դրուած էր թէ Ռէժիմ վարչութիւնը 500,000 ոսկիի կանխավճար մը ըրած է օտ. կառավարութեան: Այժմ կը տեղեկացուի թէ Ռէժիմ վարչութիւնը այդ գումարին 200,000 ոսկին միայն տուած է տուայժմ, իսկ մնացեալին համար հաստատ խոտուած տուած է: Սակայն տակաւին կեդրոնէն հրահանգ չէ եկած այդ գումարը վճարելու համար, որով առայժմ ետ մնացած է: Կալով Յուկէս միլիոն ոսկիի փոխառութեան, օտ. կառավարութիւնը Ռէժիմ վարչութեան առաջարկած պայմանը խորհրդակցութեան գնելու պէտքը զգացած է:

* * Լիբանանի նոր կառավարիչը. — Կ'ըսուի թէ տէրութիւնք հաւանած են որ Լիբանանի կառավարիչ նշանակուի հեռագր. և թղթատարական նախորդ նախարար Իպրահիմ Սուտա էֆէնդի:

* * Իսալացիի Քիոսի առջեւ. — Պատկանեալ վարչութեան հասած պաշտօնական հեռագրէ մը կը տեղեկանանք թէ Իսալացի զինուորներով լեցուն հինգ փոխգործակներ և մարտանաւեր Քիոսի առջեւ եկած են:

* * Իսալիոյ հաւեսութեան պայմանները. — Կ'ըսուի թէ Իտալիա, պատասխանելով տէրութեանց կողմէ իրեն եղած ոչ—պաշտօնական դիմումի մը՝ հաշտութիւն կնքելու մասին իր առաջարկելիք պայմաններուն, հետեւեալ առաջարկները ըրած է: 1. Պետք է որ տէրութիւնք վաւերացնեն Տրիպոլիս Իտալիոյ կցումը: 2. Թուրքիա պէտք է որ ընդունի այս կցումը: 3. Թուրքիա Տրիպոլիսէն պէտք է քաշէ իր զինուորները և զօպէ մագաննէն գութիւնը: 4. Իտալիա պիտի ընդունի Սուլթանին կրօնական գերիշխանութիւնը: 5. Եզէսականի մէջ Իտալիոյ կողմէ գրաւուած կղզիները պիտի կառավարուին ընդհ. կառավարիչի մը կողմէ, որ պիտի նստի Հառութու կղզիներու այս վարչութիւնը պիտի գտնուի հինգ մեծ տէրութեանց պաշտպանութեան և հակակշռին ներքեւ: 6. Պատերազմական տուգանք ամենեւին պիտի չվճարուի, և երկուստեք գերիները պիտի վերագարծուին առանց պայմանի:

* * Իզմիրի մէջ նախագգուելութիւն. — Նայէ Ֆրայէ Բրետէի թղթակիցը Պոլսէն կը հեռագրէ Յունիս 5 թուականով. — Բ. Դուռը փանալով որ Իտալիա կը փորձէ Իզմիր կամ անոր հարաւակողմը Սքայանօփա զօրք հանել, զինուոր կը համախմբէ Իզմիրի մէջ: Հոն գտնուող Նիզամիէի վաշտին և հոն զրկուած Գոնեայի զօրախումբէն զատ օգնական զօրք զրկուեցաւ: Նոյնպէս Սկիւտար Սէլիմիէի զօրանոցը բնակող Պոլսոյ Բ. զօրաբաժինը ամբողջովին Իզմիր զրկուեցաւ: Այս զօրաբաժինն պատկանող հեծելազօրքը այսօր ճամբայ պիտի ելլէ: Այսպէս Իզմիր համախմբուած երեք զօրաբաժինները զօրաբանակ մը պիտի կազմեն և անոր հրամանատարութիւնը պիտի ստանան: Երկուսին նախկին նախարար Մահմուտ Մուխթար փաշայ: Այսօր հրաման արուեցաւ որ Սամաիոյ Ռէտիֆի զօրախումբը գէնօքի տակ կանչուի:

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն Լ ՈՒՐ ԵՐ

* * Պալկարիոյ ֆերտինտնա Չարը և Սեւ—Լերան Նիքոլա թագաւորը Եւրպիոյ մէջ ճամբարդաւ թիւն կը կատարեն:

* * Պալկանեան կննիւ.— Թայվո, Նկատ: տոնելով պաղքատեան տէրութեանց պատերազմական պատրաստութիւնները փախ կը յայտնէ Արեւելքի խաղաղութեան մասին:

* * Պալկարիոյ և Գարատաղի թագաւորներուն վիճենա այցելութիւնը կատարած կ'արթնցնէ Լանտնի մէջ, ուր փախ կը յայտնեն թէ Պաղքանի մէջ կնճռատութիւնները անխուսափելի պիտի ըլլան:

* * Եգէական կղզիներու խնդիրը.— Աթէնքէն կը հեռագրուի թէ Եգէական ծովու կղզիներուն ընտկիչները Իտալիոյ թագաւորին և անգլիական կառավարութեան ուղղեր են յիշատակագիր մը, խնդրելով որ Իտալիոյ ամբողջացնելով իր ազատարարական գործը կղզիներուն ապահովէ Սամոսի վայելած ինքնօրէնութեան հաւասար ինքնօրէնութիւն մը կամ զիրենք միացնէ Սամոսի:

* * Հունգարիոյ խորհրդարանին մէջ յազում յառաջ բերող գէպքեր պատահեցան: Բաղմաթիւ ընդդիմադիրներ վատրուեցան նախագահ Կոմս Թիձալի կողմանէ: Երեսփոխան Դոփաշ, 37 տարեկան, խմբագիրներու օթեակէն հինգ ձեռք ատրճանակ պարպեց Թիձալի դէմ, և յետոյ ինքզինքը վերաւորեց ծանրապէս Թիձալ առջնատեղաւ, և պաղարիւնութիւնը չկարենցնելով, փարեց ժողովքը:

* * Կաթողիկէներուն յաղթանակն ի Պելժիա եւ խռովութիւնները.— Պելժ երեսփոխանական ընտրութեանց արդիւնքը բացարձակապէս աննպաստ եղաւ ազատական և ընկերավարական կուսակցութեանց համար, որովհետեւ 186 երեսփոխաններէն Կաթողիկէ աղաւ կողմը ունեցաւ: 101 երեսփոխան, Ազատականները 41, Ընկերավարականները 39, իսկ Գրիստոնեայ Տ.Մ. Եւրոպայի 2: Ազատականներուն պարտութիւնը մասնաւորապէս զգալի եղաւ Պրիւսիոյ մէջ: 1910ին Ազատականները աշխտեղ ստացեր էին 99,600 ձայն, Կաթողիկէները՝ 129,000 ձայն, իսկ Ընկերավարականները՝ 68,000, մինչդեռ այս անգամ Ազատականք շահեցան 96,000 ձայն, Կաթողիկէները՝ 140,000 և Ընկերավարականները 68,000: Ասկէ կ'երևի թէ Ընկերավարականներուն ձայները փոփոխում կրած են, մինչ Ազատականներու ձայները փոփոխում չեն կրած, մինչ ազատականները կորնցուցին մանաւանդ այն պատճառով որ յարեցան Ընկերավարականներուն: Չափաւոր ազատականներ նախամեծար համարեցին Կաթողիկէներու ձայն տալ, քան Ընկերավարականներու: Պրիւսիոյ 25 աթոռներէն Կաթողիկէները շահեցան 12 աթոռ, Ընկերավարականները 6 և Ազատականները 8:

* * Վիեննա.— Ֆելիքսգորֆի փողոցարանը պայթման մը հետեւանօք օդը ելաւ 200 թօնօ փառօդով: 30 մեռեալ և 100 վերաւոր կան: Յնցումը մինչեւ վիեննա զգույշուեցաւ:


Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Ք Ի Ի Ն

Դեղօն առ Աստուածամայր Կոյս	289
Ս. Քահանայապետին մէկ Պաշտօնագիրը	294
Ս. Պելլոս եւ Քրիստոս	298
Տեղեկագրականք	300

ԱՐՏՈՆԱՏԷ՛Ր
ՅՈՎԷ. Մ. Վ. ԿԵՏԻԿ



ՏԵՐՈՒՆ-ԻՄՔԱՆԴԱՊԵՏ
ԳԷՈՐԳ Մ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ



«ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ», Հայ Կաթողիկէ Ի Պատրիարքարան
պաշտօնական Շաբաթաբերքը, փոխադրուած է ի Կ. Պոլիս, եւ կը
սկսի հրատարակուիլ առ այժմ 16 մեծադիր էջերէ բաղկացած եւ
նոյս բովանդակութեամբ. ունենալով նաեւ տեղեկութեանց բաժին
մը, որ կը պարունակէ կարեւոր եւ սոյց ամէն յուրերն՝ համառօ-
տաժ. որով եւ մեծ դիւրութիւն կ'ընծայէ ընթերցողներէն անոնց
մանաւանդ որոնք առհասարակ ժամանակ չունին օրաբերք կարդալու :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Թուրքիոյ համար

Տարեկան Դիսեկ. արծ. 40

Վեցամսեայ » » 20

Արտասահման

Տարեկան Ֆրանկ 10

Վեցամսեայ » 5

Բաժանորդագրութիւնք կանխիկ կը վճարուին Մանսա-Քոստով եւ
կամ մէյ մէկ դրոց նամակադրութեամբ :

Մէկ թիւ 1 Դահեկան

—*—

Նամակ, յօդուած, եւն. կը դրկուին խմբագրութեան հասցէին.

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

Պատրիարքարան Կաթողիկէ Հայոց

Բերա

Կ. Պոլիս

Katoghighe Arzakank

Patriarcat Catholique

Péra

Constantinople

- ՄԱՆԾԹ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի շաբաթ օրերը:
2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ
հրատարակել իրեն դրկուած ո եւ է յօդուած:
3.— Զեռագիրներ եւ չեն դարձուիր:
4.— Ցօղուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուրքին մէկ
կողմը միայն:
5.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին: